

460 Աննան 10 մ երկարությամբ պարանի համար վճարեց 240 դրամով ավելի, քան Սոնան 7 մ երկարությամբ այդպիսի պարանի համար: Լալան որքան պետք է վճարի այդ նույն պարանից 8 մ գնելու համար:

Լուծում

1. $10-7=3$ մ
 2. $240:3=80$ դ
 3. $80 \times 8=640$ դ
- Պատ.՝ 640 դրամ:

461 ա) Խանութը երկու օրում վաճառեց 44 արկղ դեղձ: Առաջին օրը վաճառվեց 4 արկղով ավելի, քան երկրորդ օրը: Քանի կիլոգրամ դեղձ վաճառվեց յուրաքանչյուր օրում, եթե առաջին օրվա վաճառվածը 80 կգ-ով ավելի էր երկրորդ օրվա վաճառվածից:

Լուծում

1. $44-4=40$ ա
2. $40:2=20$ ա
3. $20+4=24$ ա
4. $80:4=20$ կգ
5. $20 \times 24=480$ կգ
6. $20 \times 20=400$ կգ

բ) 84 արկղ խնձորը բարձեցին երկու ավտոմեքենա: Առաջին ավտոմեքենան բարձեցին 10 արկղով ավելի, քան երկրորդը: Քանի կիլոգրամ խնձոր բարձեցին մեքենաներից յուրաքանչյուրը, եթե երկրորդում բարձած խնձորի զանգվածը 240 կգ պակաս է առաջինում բարձած խնձորի զանգվածից:

Լուծում

1. $84-10=74$ ա
2. $74:2=37$ ա
3. $37+10=47$ ա
4. $240:10=24$ կգ
5. $37 \times 24=888$ կգ
6. $24 \times 47=1128$ կգ

Պատ.՝ 1128 կիլոգրամ:

474 70 կմ 500 մ հեռավորությունից իրար ընդառաջ շարժվեցին երկու ձիավոր: Շարժվելուց որոշ ժամանակ անց նրանք կանգնեցին հանգստանալու: Այդ ժամանակ առաջին ձիավորը անցել էր 24 կմ 200 մ, իսկ երկրորդը՝ 26 կմ: Հաշվիր, թե այդ պահին որքան էր նրանց միջև հեռավորությունը:

Լուծում

1. 24 կմ 200 մ $+26$ կմ $=50$ կմ 200 մ
 2. 70 կմ 500 մ -50 կմ 200 մ $=20$ կմ 300 մ
- Պատ.՝ 20կմ 300մ:

475 Միևնույն կետից հակառակ ուղղությամբ շարժվեցին երկու հետիոտն: Շարժվելուց որոշ ժամանակ անց առաջինը անցել էր 340 մ, որը երկրորդի անցածից ավելի էր 30 մ-ով: Որքան էր այդ պահին նրանց միջև հեռավորությունը:

Լուծում

1. $340 - 30 = 310$ մ
2. $310 + 340 = 650$ մ

Պատ.՝ 650

476 8 դույլ ջուրը 24լ-ով ավելի է 5 դույլ ջրից: Հաշվիր, թե քանի լիտր է այդպիսի 10 դույլ ջուրը:

1. $8 - 5 = 3$ դ
2. $24 : 3 = 8$ լ
3. $10 \times 8 = 80$ լ

Պատ.՝ 80 լիտր: